ՆՈՐ-ԴԱՐ

№ 4 ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 11 Յունուարի **1900** Երեքշաբթի, 11 Յունուարի ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 4

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., համար 5 կ.: Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ Даръ" կամ Tiflis. Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ի մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Ընդհանուր պատմութեան նշանակութիւնը:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.—Բաղաշէնից: Շուշուց: Մոսկուայից:
Մատենախօսական:
Հեռագրներ:
Բանասիրական. — Ցօնական համարը:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 10 յունուարի 1900 թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս անհատը իւր կեանքի փորձից խրատւում և իմանում է, թէ ինչ սխալներ է գործել, և գտնում է ուղիղ ճանապարհը, որով պէտք է ընթանայ, որպէսզի հասնէ ցանկալի կէտ նպատակին և կարելոյն չափ վայելէ երկրաւոր կեանքից սպասելիք բարօրութիւնները, նոյնպէս ազգերը դէպի երջանիկ կեանք տանող ճանապարհը գտնելու համար պէտք է ուսումնասիրեն ազգերի պատմութիւնը, ընդհանուր պատմութիւնը:

Խելքը գլխին անհատը, նոյնպէս և աչքաբաց ժողովուրդը ոչ միայն իւր փորձովն է զգուշանում, այլև օգտւում է ուրիշ անհատի, օտար ժողովրդի փորձից:

Իզուր չէ ասում աշխարհիս մէջ յայտնուող հայտնագիւտ հանճարներից մէկը, մեծ բանաստեղծներից ամենից խիէալիստ Շիլլերը, թէ ընդհանուր ազգերի պատմութիւնը—համաշխարհային դատաստան է:

Մենք պատմութիւնից գիտենք, թէ ինչպէս Սպանիան իշխում էր աշխարհիս մի մասի, ինչպէս և Հոլանդիայի վրայ, ինչ արհամարհանքով սպանացիները նայում էին վերևից ներքև հոլանդացիների վրայ. յետոյ իմացանք, թէ որտեղ բարձրացան հոլանդացիները, և որտեղ իջան սպանացիները: Պատմութիւնը մեզ սովորեցնում է, թէ ինչ էին գերմանական ժողովուրդները Նապոլէօն մեծի օրով և որտեղ են հասել նրանք այսօր. պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, թէ ինչ վիճակի մէջ էին ողորմելի և սարսուռ Բալկանեան փոքրիկ ազգերը և ռուսաց զօրքերի շնորհիւ այսօր որտեղ են հասել:

Ինչու աւելի հեռուն գնանք. մի քանի տարի առաջ կատարուած դէպքերը և դրանց պատմութիւնը ցոյց են տալիս մեզ, թէ յոյն ժողովուրդն ինչպէս պատերազմեց թիւրքերի դէմ և ինչպիսի ջարդ կերաւ... և եթէ Ռուսիայի միջամտութիւնը չլինէր, Թուրքիստանը գետնին էր հաւասարեցրած... Նոյնպէս պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, մեր առաջ պատկերացնում է երկու ժողովրդի, ահագին անգլիական մեծ ազգի և աֆրիկեան փոքրիկ, չնչին, անյայտ մի ժողովրդի միջև ծագած պատերազմը և այդ պատերազմում տեղի ունեցած անցքերը: Մենք սովորում ենք այդ երկու ազգի պատմութիւնն այդ կռուի մէջ...

Այո, ընդհանուր ազգերի պատմութիւնն ամենալաւ միջոցն է, որով կարելի է ճանաչել աշխարհիս վրայ բնակուող ազգերին և իմանալ, թէ ինչքան է, որ մէկը բարգաւաճութեան է հասնում, իսկ միւսը՝ անկման:

Ազգերի պատմութիւնը երբէք չի կարող սխալուել. սխալւում են միայն նրանք, որոնք բոլորովին չեն ընդհանուր պատմութիւնն ուսումնասիրելու և ընդհանուր պատմութիւնից օգտուելու, այլև հարկաւոր դաս առնելու:

Բոլոր դպրոցներում կարևոր է, որ ընդհանուր պատմութեան ուսումնասիրութեան հարկաւոր տեղը տրուի. չոր ու ցամաք անցքերի նկարագրութիւնը, քրոնիկոն բաւական չէ:

ՔՐՈՆԻԿՈՆ

«Temps»-ի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, թէ ռուսաց դեսպանատան բողոքների շնորհիւ Թուրք մինիստրների խորհուրդը որոշել է, որ սահմանի մօտ եղած քաղաքների Թուրք հպատակներին այսուհետև դժուարութիւններ չյարուցանեն իրենց հայրենիքը վերադառնալ ցանկացող հայերին անցագիր տալու գործում: Սուլթանը հաւանութիւն է տուել այդ որոշմանը: Խիստ ցանկալի է, որ այս լուրը ճիշտ լինի, և Կովկաս գաղթած հայերն անարգել կարողանան վերջապէս վերադառնալ իրենց հայրենիքը:

— Երկրների սելով, երկրագործութեան մինիստրութիւնը մտադիր է մի առանձին յանձնաժողով ուղարկել հետազօտելու համար Արաքս գետի մօտ եղած տեղերը, ուր բնակութիւն հաստատելու համար թոյլտւութիւն են խնդրում զանազան հողատէրեր Ռուսիայի հարաւային նահանգներից:

— Թիֆլիսի հայ հոգևորականութիւնը իւր քահանայական գանձարանից յատկացրել է Ախալքալաքի աղէտից վնասուած գիւղացիների օգտին՝ 150 րուբլի:

— Ցայտնի հարուստ պ. Ա. Մանթաշեանն Ախալքալաքի գաւառում երկրաշարժից վնասուածների օգտին նուիրել է 5000 ր.: Մինչև յունուարի 7-ը երկրաշարժից վնասուածներին օգնող գլխաւոր մասնաժողովի ձեռքի տակ կարնուիրաբերութիւններից հաւաքուած 106,000 ր.: Յիշեալ մասնաժողովը իւր յունուարի 7-ի նիստում որոշեց միջոցներ ձեռք առնել թաղելու փլատակներից հանուած մարդանց և կենդանիների դիակները: Մասնաժողովի հետևեալ նիստը նշանակուած է վաղը, յունուարի 12 ին:

— Կովկասի դրաքննական ատեանի ռուսաց և եւրոպական լեզուների աւագ գրաքննիչ պ. Նոֆալը, իւր խնդրքի համաձայն, արձակուած է յիշեալ պաշտօնից: Այդ պաշտօնը յանձնուած է մամուլի գործերի գլխաւոր վարչութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ պ. Ումանեցին:

— Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ տպագրել յիշեալ ընկերութեան օգտին կայացած 1899 թուի դեկտեմբերի 5-ի պարահանդիսի հետևեալ հաշիւը:

Մուտք. տոմսակների վաճառումից— 1169 ր. 55 կ., պլեմիայից — 341 ր. 10 կ., բուֆէտից զուտ արդիւնք — 484 ր. 95 կ., ընդամեն 1995 ր. 60 կ.:

Ելք. ժողովարանի դահլիճի վարձ — 100 ր., մարկայի — 80 ր., կոտիլիօնի իրերի համար— 112 ր. 28 կ., դեկորատորին — 80 ր., երաժիշտներին — 30 ր., ծառաներին — 15 ր. 80 կ., ծրարների, տոմսերի և յայտարարութեան տպագրութեան — 33 ր. 75 կ., Թղթի և տոմսերի համար — 35 ր. 67 կ., ընդամենը 476 ր. 50 կ.:

Ծախսը հանելով մուտքից զուտ արդիւնք մնում է 1519 ր. 10 կ.:

Վարչութիւնը պարտք է համարում յայտնել իւր խորին շնորհակալութիւնը պարահանդիսի յայտարարութիւնները ձրի տպագրող լրագրներին, տպարանատէր պ. Մ. Մարտիրոսեանին, որ ձրի տպագրել է պարահանդիսի հրաւիրատոմսերը, նկարիչ պ. Նշանեանին և այն անձերին, որոնք նպաստել են պարահանդիսի կազմակերպութեանը:

— Թիֆլիսի հանրակրթական դասընթացների դասախօսները յունուարի 7 ին գումարած ժողովում որոշեցին ուսումնական այս տարուայ երկրորդ կիսամեակի դասախօսութիւններն սկսել յունուարի 14 ից: Դասախօսութիւններն ըստ առաջնոյն տեղի կունենան ապա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑՕՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ

I.

Ցասկոտ, ոլորուն հողմը ձիւնի մի քանի փաթիլներ խփեց Դրաղէտեանի երեսին հէնց այն րոպէին, երբ նա տան դուռը բանալով դուրս եկաւ նեղ փողոցը և ուղղութեան դէպ Միքայէլեան կամուրջը: Չնայելով եղանակի ցրտութեան, այնուամենայնիւ երևում էր, որ ճրագալոյցի երեկոն է: Զատ արագ էր քայլում Դրաղէտեանը՝ առանց ուշ դարձնելու իւր չորս կողմը եռացող կեանքին: Նա ժամանակին պիտի տպարան հասնէր: Սակայն իւրաքանչիւր քայլում նա ընդհարւում էր մանուկների, երիտասարդների, ջահել աղջկանց, կանանց և նոյն իսկ ծերերի խմբերի, որոնք արագ անցնում էին իւր մօտով, և նրանցից իւրաքանչիւրն աշխատում էր թղթէ լապտերի մօտ վառուող մոմի բոցը պահպանել հողմի հարուածներից:

Լապտերներից ցոլացող աղօտ լոյսը երբեմն ընկնում էր նրանց կրողների երեսների վրայ և տխրադէմ Դրաղէտեանը նկատում էր, թէ ինչպէս ամենքի դէմքերը փայլում են մի անսովոր ուրախութեամբ, մի հազուագիւտ երջանկութեամբ:

Տօն է, ճրագալոյց է, ամենքն շտապում են տուն թաթախուելու, ուրախանալու, իսկ ինքը, ինքն ո՞ւր է գնում...

Ամեն օր այդ ժամին նա անցնում էր եկեղեցու առջևից, սակայն այս անգամ չկարողացաւ անտարբեր մնալ. եկեղեցու դուռն ուղղակի փողոցի վրայ էր, և ժողովրդի խուռն բազմութիւնը մայթի վրայ խռնուած՝ բռնել էր ճանապարհը:

Մայթից սկսած մինչև եկեղեցու ներսը վառուած մոմերը շրջմոլիկ կրակների պէս յետ ու առաջ էին գնում, ու եկեղեցու ներսը ճեղքած լոյսը խնկի և վառուող մոմերի ծխի հետ դուրս հոսելով հրագոյն ալիքներով ողողում էր եկեղեցու գաւիթը, լուսաւորելով խռնուած ժողովրդի դէմքերը և գոյնզգոյն զգեստները:

Հազարաւոր ճրագների այդ պայծառ լոյսը ցոլանում էր եկեղեցու դրան երկու կողմերի ու նոյն իսկ բարձրաբերձ գմբէթի պատուհաններից ու երեկոյեան խաւարի մէջ ուրուագծում էր եկեղեցու տեսիլն իբրև մի հսկայական մոգական պատկեր:

Եկեղեցու դրան առաջ տիրող աղմուկը ընդհատւում էր ներսից լսուող երգեցիկ խմբի ոչ շատ ներդաշնակ համերգով:

«Դեռ ժամանակ ունեմ», մտածեց Դրաղէտեանը և, մի կերպ հրհրելով դրան առաջ խռնուած ամբոխը, մտաւ եկեղեցու ներսը:

Տաք է. ամբողջ օդը տոգորուած է խնկի և մոմի հոտով: Ժողովուրդն անշարժ է, և ամենքի ուշադրութիւնն ուղղուած է դէպի սեղանն ու երգեցիկ խումբը:

Ընդհանուր ոգեկան անդորրութիւնը խանգարում են միայն զանձանակ պտտեցնող և մոմ բաժանող տիրացուները:

Կարծէք ամենքն էլ այդտեղ են: Ամենքին էլ ճանաչում է Դրաղէտեանը, բայց չէ կարողանում նրանց տեսակները որոշել այնպէս, ինչպէս որոշում էր ամեն օր նրանց հանդիպելիս: Ամենքի վրայ մի առանձին հով կայ, մի սրբութեան քօղ, որ ակամայ պատկառանք է ներշնչում: Աշխարհի արարիչն է այսօր նրանց ամենքի հովանաւորը, պաշտպանը:

Ահա միշտ մտախոհ, միշտ ազահ գիշակերի աչքեր ունեցող իւր ծանօթ վաշխառուն: Նա սովորականից աւելի մաքուր է հագնուած և երեսի արտայայտութիւնը կարծես բոլորովին փոխուած է—փափուկ, մեղմ, հեզ, և նա բարևում է նորեկին այնպիսի անասելի հեզութեամբ, որ Դրաղէտեանը մինչև անգամ համակրութիւն է զգում դէպի նա: Նրա առաջ շարուած չորս երեխաները ծաղիկների պէս զարդարուած, մի մի մոմ ձեռներնին, իրենց մեծ-մեծ անմեղ աչքերով դիտում են շուրջը և ժամանակ առ ժամանակ այդ աչքերը դարձնում են իրենց հօր վրայ: Որքան գեղեցիկ է այդ գիշակերի նմուշքն այդ վայրկենին. նա շոյում է զաւակներին, փայփայում է և միևնոյն ժամանակ. ցոյց տալով դէպի սեղանը, հասկացնում է, թէ պէտք է խելօք կանգնել և լսել...

Ինչ պատուական երեխաներ են, մտածում է Դրաղէտեանը, ինչ պատուական մարդ...

Բայց այդ միտքը չաւարտած՝ նա նկատում է միւս կողքին մեծ, արտօնուած գողին, ինչպէս սովոր են նրան անուանել: Որքան ջերմեռանդութեամբ է նա կանգնած այդտեղ և որքան պատկառանք ու բարեպաշտութիւն է ներշնչում նա իւր շուրջը եղողներին: Նա աղօթում է անկեղծօրէն, անպատճառ անկեղծօրէն, այդ ապացուցանում է նրա դէմքի ամեն մի երակը, նրա ամեն մի ակնթարթը, նրա շրթունքների ներքնային դողը, նրա աչքերի արտասուքը:

Ցանկալի նա իւր փափուկ նայուածքը ձգում է Դրաղէտեանի վրայ, որ շփոթուած սկսում է խաչակնքել և միևնոյն ժամանակ ողջունել նրան:

Բայց ահա այստեղ է և դահիճը. այդպէս էին անուանում նրան, որովհետև նա շատ էր հաւանել և հետևում էր մի անգլիացի դահճի խօսքին թէ՝ «ես ընկղմուելով հակառակ եմ մահուան պատժին, բայց մարդկանց գլուխները կտրատում եմ իբրև արհեստաւոր ու դրանով եմ աշխատում իմ երեխաների հացը»: Ահա և այդ դահիճը, սպանիչներից ամենազգուշելին, ամենավատթարը: Դրաղէտեանը, նոյնպէս և ամենքը գիտէին այդ տարօրինակ, անօրինակ դահճի պատմութիւնը: Նա երկար տարիներով հայրենիքից հեռացած էր մինչև Չինաստանի խորքերը, Թիբեթի լեռները և այնտեղ պաշտօն էր ստանձնել մի հեռաւոր նահանգի Չինգ-Ֆու-Չու անունով խանի մօտ, մի սոսկալի պաշտօն.—մեռցնել ամեն մի կեանք կամ իւր սաղմի մէջ կամ անմիջապէս առաջին ընձիւղն արձակելիս: Նրա պաշտօնն էր ման գալ օր և գիշեր բոլոր երկիրը և կոխոտել ու արմատախիլ անել ամեն մի բոյս, որ համարձակուել է Աստուծոյ հրամանով իւր կանաչ գլուխը դուրս բերելու հողի տակից: Նրա պաշտօնն էր պոկել և ոտնատակ տալ ճզմել ամեն մի ոչ միայն բացուած ծաղիկ, այլ և ամեն մի բողբոջ: Որպէս զի ոչ մի թռչուն պատահմամբ երևացող ցալարի վրայ չգայ, նա նոյն իսկ Չինական պատերն իբրև հիմք ընդունելով վարագոյր էր շինել իրեն յանձնուած կալուածներում, որ արեգակի լոյսը ներս չթափանցէ, իսկ եթէ որևէ տեղ մի ճրագ երևար, նրա սրբազան պաշտօնն էր վաղել և մարել: Նա այդ պաշտօնը վաղուց կատարել, պաշտօնավուել և վերադարձել էր ի հայրէ Թիբէթեան նշաններով ու այժմ նա էլ է Աստուծոյ տաճարում, ջերմեռանդ է, պատկառելի և ուրախ. անկեղծօրէն ժպտում է: Նրա առաջ կանգնած 15-ամեայ գեղահասակ դստեր կուրծքը նոյն իսկ այդ ցուրտ ձմրան օրը զարդարուած է գեղեցկագոյն, փայլուն ու անուշահոտութիւն բուրող վարդերով ու յասմիկներով. նոյնը և գլխարկի վրայ, որ ոսկեայ հայրը քնքշութեամբ ուղղում է ու կարգի բերում...

Մի՞թէ նա չի պոկել այդ ծաղիկներն այս րոպէին, մի՞թէ նա նրանց չի կոխկրտել այս րոպէին: Ոչ, նա չէ պոկում:

Ահա պատկերի առաջ վառուող մոմը ծռուեց և քիչ է մնում վայր ընկնի. նա վազեց ուղղելու...

«Մարեցէ՛ք, փչեցէ՛ք» շշնջաց Դրաղէտեանն անգիտակցաբար, կարծես պատասխանելով իւր մտքերին. բայց նա ուղղեց մոմը, մատով կարճացրեց կպրուած պատրոյգը և երեսին խաչակնքելով դարձաւ ու ժպտալով ասաց Դրաղէտեանին.

—Դուք վախեցաք որ հրդեհ կլինի:

—Ես, ես,—շփոթուեց Դրաղէտեանը—ես կարծեցի, թէ կրակը կընկնի և հրդեհ կպատճառի, այո, կրակը...

—Ոչ, բարեկամս,—պատասխանեց նա,—այդ մոմերը վառուած են լոյսի համար և լոյսից հրդեհ չի առաջանալ:

Դրաղէտեանն ապշել էր. չգիտէր՝ ինչ ասէ, ինչ պատասխանէ. նրան ճշմարտութեամբ էին հարուածում, և նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչու Թիբէթի տարօրինակ դահիճն այդ օրն ամեն մի ճրագ չէր համարում հրդեհի նշան: Տարօրինակ է, տարօրինակ:

յոց առաջին գիմնազիոնի շէնքի մէջ։ Առաջին կիսամեակում ունկնդիրների թիւը եղել է 202։ Երկրորդ կիսամեակի դասախօսութիւնները լսելու համար տոմսակներ վերցնել կարելի է մինչև յունուարի 13-ը, հինգշաբթի, Օ. Ն. Բօգդանովիչի մօտ, որին պէտք է դիմել աղջկանց առաջին գիմնազիոնը, երեկոյեան ժամը 7-ից մինչև 9 ը։

Յունուարի 6-ին Ջրօրհնեաց հանդէսը Թիֆլիսում կատարուեց, ըստ սովորականին շքեղօրէն։ Ինչպէս միշտ, այս անգամ էլ գրեթէ ամբողջ քաղաքը գետափին էր։ Հազարգլխեան ամբոխը ցուարճանում էր բազմաթիւ լողացողների վրայ, որոնք իրենց մարմինն առաջուց տաքացրել էին ոգելից խմիչքներով։ Չնայելով ոստիկանութեան արգելքին, ժողովուրդն էլի հաւատարիմ էր մնացել իր հնաւանդ սովորութեանը,—տարճանակներ էին, որ «Խաչը ջուրն ընկած» ժամանակ պայթում էին օդում այս ու այն տեղ, և բարեբաղդաբար ոչ մի դժբաղդ դէպք չպատահեց այս անգամ։ Հանդէսը վերջանալուց յետոյ, առաջնորդարանում, ըստ սովորականին, ընդունելութիւն կար և նախաճաշ էր պատրաստուած Քրիստոսի Ծնունդն ու Մկրտութիւնը շնորհաւորողների համար։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԲՈՒԳԱՇԷՆ գիւղից (Ախալքալաքի գաւառ).—Ինչպէս յայտնի է, Ախալքալաքի գաւառում աղէտից ազատ մնացող գիւղացիները մեծ սարսափի մէջ են և շատերն իրենց բնակարանների մէջ չեն ապրում, այլ ժամանակաւոր պատրաստուած տախտակամած խրճիթներում և վրաների մէջ են ապրում։ Նոյն սարսափի մէջ գտնուելով աղէտից մնացած գիւղերի մերձաւոր Բուղաշէն գիւղը, վերջինիս բնակիչներից շատերը դուրսն էին ապրում, ի միջի այլոց մի ընտանիք, բաղկացած 9 հոգուց, տեղաւորուել էր իրենց սեպհական խոտի դէզի մէջ։ Այդ ընտանիքը 1—2 օր ու գիշեր դէզի մէջ ապրելուց յետոյ, երրորդ գիշերն իրենց անզգուշութիւնից՝ լամպի կրակի յոյսը հրդեհում է խոտի դէզը և իր մէջ խորովում տապակւում է 9 հոգուց 6 հոգի։

—

ՇՈՒՇՈՒՑ.—Յունուարի 1-ին Խանքենդ աւանում կնքեց իր մահկանացուն մեր գրական գործիչներից մէկը՝ Յակովբ Ճաղարբէգեան։ Աւելորդ չենք համարում տալ հանգուցեալի համառօտ կենսագրութիւնը։ Ուսման սիրով տոչորուած երիտասարդը, Շուշու թեմական դպրոցն աւարտելուց յետոյ, կամենում է բարձրագոյն ուսում ստանալ, բայց ընտանեկան զանազան հանգամանքներ արգելք են հանդիսանում հանգուցեալի մտադրութեան։ Միւս կողմից Շուշու մթնոլորտը կրթութեան սիրով վառուած երիտասարդի համար շատ անձուկ էր և ահա նա դիմում է Թիֆլիս, ուր կարողանում է մասնաւոր դասեր ունենալ և իր ուժերը նուիրել գրականութեան։ Այնուհետև նրան յաջողւում է Շամախու հոգևոր դպրանոցի տեսչական պաշտօնն ստանձնել։ Այդ պաշտօնում մնում է մի քանի տարի, ապա դառնում է հայրենի քաղաքը մշտապէս մնալու համար։ Շուշում հրաւիրւում է հոգևոր դպրոցի ուսուցիչ՝ հայոց լեզուի և հայոց պատմութեան։ Նոյն պաշտօնով լինում է և օրիորդաց դըպրոցում։ Սակայն հանգուցեալը կամենում էր Կովկասի մայրաքաղաքում մընալ և նուիրել իր ուժերը գրականութեան։ Եւ ահա նա սկսում է իր առաջին յօդուածները զետեղել «Նոր-Դար»ում։ Նա աշխատակցում էր և «Արձագանք»-ին, գրում էր քննադատական յօդուածներ «Թատրոն»-ում և վերջերս «Լումայ» հանդէսում։ Նիւթական նեղ դրութիւնը գրական գործչին ստիպում է միաժամանակ հեռանալ Թիֆլիսից Բագու, ուր մասնաւոր գործով կարողանում էր իր ապրուստը հայթայթել։ Բագւում չարքաշ կեանք վարելով բարակացաւ հիւանդութիւն է ստանում։ Բժիշկները խորհուրդ են տալիս դառնալ հայրենիք և մշտական ընակութիւն հաստատել Խանքենդ աւանում։ Այստեղ էլ վախճանուեց նա $2^1/_2$ տարի ապրելուց յետոյ. երիտասարդ գրողը մինչև ամենավերջին շունչը գրիչը ձեռքից չէր թողնում։ Նա թողել է բաւականին երկասիրութիւններ՝ «Վահան Մամիկոնեան», «Բանահիւսութեան տեսութիւն», «Սասունցի Դաւիթ», «Հայոց լեզու», «Քերականութիւն», «Հայոց պատմութիւն» և վերջերս հրատարակած «Հարստութիւն» գրքոյկը. բացի վերոյիշեալ գրքերից ունի և մի թարգմանութիւն՝ «Աշխարհի թագուհու դատաստանը» և ուրիշ գրուածքներ, որ զետեղել է լրագրներում և հանդէսներում։ Ճաղարբէգեանը մեռաւ դառն աղքատութեան մէջ թողնելով կնոջ և երկու երեխաներին։ Երիտասարդ գրողին բաւականին օգնում էր յայտնի բարեգործ պ. Առաքել Ծատուրեանը։

—

ՄՈՍԿՈՒԱՅԻՑ.— Ինչպէս յայտնի է, դեկտ. 27-ին լրացաւ հայ ընթերցող հասարակութեանը քաջածանօթ պ. Իւրիյ Վեսելովսկու գրական գործունէութեան տասնամեակը։ Ներկայումս Մոսկուայի մի խումբ գրասէր հայերի մէջ միտք է յղացել յունուարի 22-ին իրենց շրջանում մի համեստ հանդիսով տօնելու ռուս համակրելի երիտասարդ գրողի արդիւնաւէտ գործունէութեան այդ տասնամեակը։

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Յակոբ Յակոբեան, «Բանաստեղծութիւններ», Թիֆլիս, 1899.

—

Այս բանաստեղծութիւնների մասին յարգելի պ. Բերբերեանը «Նոր-Դար»ի վերջին համարներից մէկում խօսել էր և, կարելի է ասել, բոլորովին ոչնչացնող լեզուով։ Մենք չենք ցանկանում վիճաբանութեան մէջ մտնել. այլ միայն մի երկու խօսք ասել այդ առթիւ։

Բանաստեղծութեան նպատակն է որ եէ պատկերով զգացում, յոյզ առաջացնել ընթերցողի մէջ։ Եթէ այդ նպատակին հասնելու առաջին պայմանն է, որ բանաստեղծն ինքն զգացուած լինի իր գրուածքի մէջ, միւս կողմից պէտք չէ մոռանալ և այն հանգամանքը, որ, որպէս զի ընթերցողը կարողանայ մի ոտանաւորից տպաւորութիւն ստանալ, պէտք է տրամադրուած լինել զգալու և յատկապէս այն զգալու, ինչոր բանաստեղծը իր գրուածքի մէջ արտայայտել է։ Յաճախ մարդ թերթև կերպով կարդում է մի բան առանց ունենալու այդ պահանջուած տրամադրութիւնը, և ահա կարծում է, թէ գրուածքը բնաւ արժէք չունի։ Մինչդեռ եթէ ուրիշ անգամ կարդայ, գուցէ մի բան զգայ։ Որքան յաճախ մի ոտանաւոր մեզ ոչինչ չէ ասած, բայց մի օր էլ իսկապէս ազդել է մեզ վրայ։ Եթէ նոյն իսկ Գէօթէի բանաստեղծութիւններից յաճախ չեն ազդուել մարդիկ և չեն ազդւում, թոյլ բանաստեղծութիւններն անշուշտ աւելի մեծ վըտանգի մէջ են իրենց նպատակից վրիպելու նկատմամբ։

Բայց աւելի լաւ է, կասեն, բանաստեղծութիւն չլինի, քան թէ թոյլ բանաստեղծութիւն լինի։

Շատ ճիշտ է, բայց միայն զարգացած, բանաստեղծութեամբ հարուստ գըրականութիւնների համար։ Ֆրանսիացու կամ գերմանացու համար հրապարակ ելնող թոյլ բանաստեղծութիւնը եղած չեղած մէկ հաշիւ է,—նա այդ թոյլերը կարդալու կարիք չունի, քանի որ ունի Հիւգոյի կամ Գեօթէի նման բանաստեղծներ։ Բայց մինչև որ ֆրանսիական կամ գերմանական բանաստեղծութիւններն իրենց զարգացման բարձր կէտին են հասել, ո՛րքան երկրորդական ու երրորդական կարգի բանաստեղծներ, որոնք այժմ մոռացութեան են տրուած, աշխատել են մեծ բանաստեղծների առաջ իբրև ուղի հարթողներ։

Մեր բանաստեղծութիւնը, որ դեռ մանուկ է, շատ բնականօրէն մանկական թոթովանքներով եւ պէտք է սկսէ լեզուն բանալ։ Արհամարհել այդ թոթովանքները—կընշանակէ բանաստեղծական գրականութեան զարգացումն արհամարհել, քանի որ այդ թոթովանքների վրայ պիտի առաջանայ այլրական լեզուն։ Ահա այդ պատճառով «բանաստեղծութիւն» անուան տակ երևան եկող ամեն մի գրքոյկ պէտք է մեր առանձին հետաքրքրութեան առարկան լինի, և մենք մեծ զգուշութեամբ պէտք է վերաբերուինք, նորից ու նորից կարդանք այդպիսի գրքոյկը, որպէս զի մեր կարծիքի մէջ չսխալուենք և գրչի մի շարժումով չոչնչացնենք մի թոթովանք, որ իսկապէս լեզուի նշան է։

Քանի՛ ու քանի՛ անգամ կարդալով պ. Յակոբեանի բանաստեղծութիւնները, կարծում եմ, որ պ. Բերբերեանի նկատողութիւնները, թէպէտև շատ բանով ճիշտ, շատ խիստ էին, մանաւանդ մի նոր սկսող բանաստեղծի համար։

Ասել թէ պ. Յակոբեանի բանաստեղծութիւններից այս կամ այն ոտանաւորը ոչինչ չէ ասում ընթերցողի սրտին,—ես չեմ կարող։ Անշուշտ, պ. Յակոբեանը ոչ բուռն զգացումներ ունի, ոչ էլ երևակայութեան թռիչք, և ոչ իսկ զգացումների և գաղափարների նորութիւն է բերում մեր բանաստեղծութեան մէջ, բայց միթէ ամենայն բանաստեղծ, այն էլ նոր սկսող մէկը, այդ յատկութիւններն ունի։

Սէր, բնութիւն, հայրենիք ու սնոտիապաշտ ժողովրդի վիճակ,—ահա նիւթը։ Եւ պ. Յակոբեանը տալիս է մեզ գոնէ փափուկ զգացմունքով մի քանի ոտանաւորներ, որոնք երբեմն նոյն իսկ նոր ու գեղեցիկ պատկերներ ունին իրենց մէջ։

Վերցնենք, օրինակ, նրա ոտանաւորներից ամենից անյաջողն իբրև ոտանաւոր (եր. 16)։

«Մոխակը ցնէ, ցնէ մըկառայ, լացեց—
Ու լեզուն բացուեց.
Վարդի կոկոնը քնից սթափուեց—
Ու կուրծքը բացեց։
Առուն հեւալով, հողը շերտելով,
Իր ուղին հարթեց
Եւ ծաղիկներին հնաւից տեսնելով,
Վազեց համբուրեց։
Իջաւ անձրևը, զովացան ծառեր
Նորա շիթերով,
Հողը երաշտած իր տապը մարեց,
«Ուխայ» անելով։
Երգիչը միայն մէն-մենակ մնաց
Հետ իր քնարին,
Նորա նազելին անտարբեր մնաց
Սիրոյ երգերին»։

Ահա մի ոտանաւոր, որ իսկապէս ոտանաւոր չէ։ Յանգերի թուլութիւն, նոյն իսկ երկու տեղ յանգ չկայ՝ բացուեց—բացեց, մնաց—մնաց. կամ տողի մէջ աւելորդ նմանայանգութիւն հնչա-

Դեռ այդ մտածմունքից չսթափուած՝ Գրագէտեանը տեսաւ, թէ ինչպէս նա բարկացաւ երկու չարաճճի երեխաների վրայ, որոնք հրհրելով ուզում էին եկեղեցուց հեռացնել երկու պատառոտուն հայ գաղթականներին։

Գրագէտեանը տեսաւ, թէ ինչպէս նա քնքշաբար բռնեց երկու գաղթականների թևերը և նրանց կանգնեցրեց իր նազելի դասեր կողքին, տալով նրանց իր ու իր դասեր ձեռքի վառած մոմերը։ Միթէ նա չգիտէ, որ այդ թըշուառ տարագրուածների տունն ու օջախը քարուքանդ են արել. միթէ նա չգիտէ, որ դրանց մասին ոչ թէ միայն պէտք է խօսքով ու գրով հրաւէր կարդալ օգնելու, այլ և անձամբ պէտք է օգնել և խնամել։ Գրագէտեանը տեսաւ, թէ ինչպէս նա իր գրպանից հանեց թղթադրամ ու ծածուկ ճնտեց գաղթականների բուռը և կամաց ձայնով ասաց. «սպասեցէք այստեղ, չհեռանաք, միասին դուրս կըգանք և կըգնանք մեր տունն ու միասին կըթաթախուենք»։

Հրաշք է արդեօք, գիտական աշխարհ է. իրականութիւն է արդեօք—կայծակի արագութեամբ հարցումները հետևում էին միմեանց Գրագէտեանի գլխում—գուցէ մինչև այժմ ինքն իրեն չէ ճանաչում... Նրա մազերի կապը կորել էր, մտածելու անընդունակ էր. սիրտը ճմլուած էր անհասկանալի ծանրութիւնից. չգիտէր՝ որտեղ է սկսում երջանկութիւնը և որտեղ վերջանում վիշտը։ Արագ դուրս եկաւ փողոց, ու երբ ձիւնի փաթիլները խփեցին երեսին, մտաբերեց, թէ ուր պիտի ուղղի քայլերը։

II.

Երբ Գրագէտեանը բաց արեց տպարանի դուռն ու ներս մտաւ, մի վայրկեան մնաց կանգ առած դրան առաջ։ Նրա գլուխը պտտում էր։ Նա սովոր էր տպարանի օդին. բայց այսօր եկեղեցու խնկի հոտից և նրան անբաժան տպաւորութիւններից յետոյ նրա վրայ յետ հրող տպաւորութիւն արաւ բենզինի, մեքենայի իւղի, տպարանական թանաքի ու արճճի փոշու հոտը։ Հազարաւոր ճրագների բոցերով լուսավառուած եկեղեցուց յետոյ նա մտնում էր կիսամութ-երկրեայ տպարանի ընդարձակ դահլիճը, ուր առկայծում էր մթութեանն աւելի տխրութիւն տուող միակ կանթեղը, կախուած առաստաղից, ուղղակի «մեծ մեքենայի» գլխին։ Չէր լսւում մարդկային և ոչ մի ձայն, այլ միայն մեքենայի եռեւից մի խումփոց հասկացնում է Գրագէտեանին, թէ տպագրիչը, ցերեկուան աշխատանքից յոգնած, քնած է։ Գրաշարական սենեակից լսւում էին փոխադարձաբար երբեմն թխթխ, բայց սուր ու արագ չրխկոց, որ առաջանում է «սրբագրութիւնից» ու երբեմն սուր հագ, որ ընդունակ է արտադրել միայն գրաշարի կուրծքը... Դա միակ օրապահ գրաշարն էր, որ սրբագրում էր կոլոններն ու պատրաստում էր լրագրի Ծննդեան տօնական համարի երեսները՝ մեքենան ձգելու համար։

Միմեանց կողքի շարուած ահագին, տպագրական, կտրիչ, գծիչ, ծակոտող մեքենաները շոգեշարժի հետ միացնող ահռելի թոկերով ու երկաթեայ ձողերով մի-մի կախաղանի էին նմանում։

—Յովսէփ, եթէ երեսները պատրաստ են, բեր կարդամ,—ասաց Գրագէտեանը բանալով գրաշարների սենեակի դուռը։

Նիհար, բայց աշխուժոտ երիտասարդ գրաշարը կարծես ուրախացաւ մարդկային ձայն լսելուն և անմիջապէս ժողովեց մի կոյտ թերթեր, երկար երկար պատռած սիւնակներով ու միւս ձեռքն առնելով փոքրիկ թիթեղեայ կանթեղը՝ ուղղուեց դէպի տպարանի դահլիճի հեռաւոր անկիւնն ու կանթեղը դնելով մի երկար սեղանի վրայ, որ դեռ ծածկուած էր կէս-շոր կէս-խոնաւ սանձով, «բոլորն այստեղ է» ասաց և ուզում էր հեռանալ, բայց մի վայրկեան կանգ առաւ ու կատարեալ ազատ ու անբռնազբօսիկ ժպտով ասաց.

—Պ. Գրագէտեան, այս երեկոյ ամենքն ուրախանում են, տօն է, թաթախւում են, ուտում են, խմում, քէֆ են անում. իսկ դուք այստեղ ամբողջ գիշերը պէտք է աշխատէք։

—Շատ համեստ ես, սիրելի Յովսէփ,—պատասխանեց Գրագէտեանն ընկերական պարզ ժպիտով։—Չէ՞ որ դու էլ ինձ հետ ես և աւելի պիտի աշխատես։ Մենք թաթախուել չենք կարող, բայց վաղը կըգաս ինձ մօտ, և թաթախուելու փոխարէն կըթրջուենք. այնպէս կըթրջուենք գինով, որ մեր կողքով անցնողները կըթաթախուեն։ Բայց մի՛ սպասիր եմ, որ դաս անցեալտարուան պէս մորդ թրխած գաթայից շերեւ, չատկընեղանամ։

—Կըգամ, կըգամ, պ. Գրագէտեան, անպատճառ կըգամ, երեք գաթա էլ արդէն մայրս պատրաստել է, այն էլ կըբերեմ... ներեցէք էլ չեմ խանգարում, գրաղուեցէք։

Գրագէտեանն իբրև խմբագրութեան օրապահ անդամ, այդ գիշեր պիտի կարդար Ծննդեան տօնական համարը։ Նա ի հարկէ չգիտէր, չէր կարող հաստատապէս ասել, թէ արդեօք այդ «համարն» ընթերցողների ախորժակին նոյնքան անհրաժեշտ պահանջ էր, որքան այդ երեկոյեան նաւակատեաց խորտիկները. բայց մի բան հաստատ գիտէր, որ վաղն առաւօտ այդ «համարը» բոլոր միւս քաղաքավարի հիւրերի և այցելուների նման, նոյն իսկ ամենից առաջ պիտի այցելէ մի որոշ հասարակութիւն, որոնք անուանւում են բաժանորդներ ու նրանց կցորդ-ընթերցողներ, և պիտի այցելէ ոչ պարսկական զգեստով և ոչ սովորական ամենօրեայ ներքին տրամադրութեամբ, այլ արտաքուստ աւելի մաքուր հագնուած և «նոր ծնուած տառերի» վկայականը ձեռքին. լաւ սափրուած, սանրուած, կոկուած։ Ի հարկէ ընթերցողներից մէկը վաղ առաւօտեան կսկսէ ուշադրութեամբ զրոյց անել այդ «համարի» հետ ու երբ նկատէ, որ նա այնպէս չէ խօսում, ինչպէս կարող կըլինէր, կըգայ այն եզրակացութեան, որ նա «համար» չէ, այլ համր է. միւսը նրա համրութիւնը հասկանալով՝ կառէ—«այ դու խորամանկ» ու կըսկսէ նրա հետ աչքով-ունքով խօսել «հ՞ըմ, այո՛, չէ՞, այս այսպէս է չէ՞, այս էլ այնպէս է չէ՞» ու այսպիսի կատակներ կանէ։

Գրագէտեանը գիտէր, որ այդ «համարի» զգեստներն էլ, սանրուածքն էլ՝ ինչպէս միշտ՝ այս անգամ եւս կարող են տարօրինակ լինել. օրինակ՝ փրակի թևերը կարող են կտրուած լինել և առաջից կարուած, որովհետև զգեստի ճաշակը կախուած է լաւ դերձակից, և նա կարող է գտնել հասարակական բարոյականութեան տեսակէտից, որ առջևը բաց զգեստով ներկայանալն ամօթ է, իսկ թէ այդպիսով միւս կողմն է բաց մնում, այդ ներելի է, որովհետև, որովհետև... ինչ պիտի անես. այդպէս է։ Նա գիտէ, որ ոչ մի ընթերցող չի զարմանալ, եթէ այդ «համարը» նոյն իսկ տօնի օրը ներկայանայ առանց ականջի, կամ քթի. ամենքը գիտեն, որ վարսավիրի մօտ լինելուց աւելորդ մազերի հետ քիթը և ականջն էլ են վըտանգի ենթարկուած։

Այս բոլորը գիտէր Գրագէտեանը, ինչպէս գիտեն և ամենքը, բայց նա դրանց մասին չէր մտածում այդ երեկոյ։

Նա իր միւս պաշտօնակիցների պէս շատ անգամ էր այդ նոյն տեղը նստած կարդացել լրագրի հետևեալ օրուան համար պատրաստուող համարը ու շատ անգամ էր տեսել, որ ձեռագրերը տըպարանական կերպարանքի ենթարկուելով միևնոյն ժամանակ զարմանալի քիմիական տարրալուծութեան են ենթարկւում, և նա միշտ հետաքրքրուել էր այդ բարենորոգուած թերթերով. բայց այսօր այդ տպագրուած թերթերի կոյտը նրան գրգիռ և մինչև անգամ մի տեսակ ատելութիւն էր պատճառում։ Չնայելով նրա հանգստացուցիչ խօսքերին, որ նա մի քանի վայրկեան առաջ ասաց բարեբաղդ գրաշար Յովսէփին, այնուամենայնիւ եկեղեցուց հեռանալու վայրկեանից նրան թւում էր, թէ այդ պահուն ամբողջ քրիստոնեայ աշխարհում միայն ինքն է այդ կիսախաւարի մէջ նստած հոգում հասարակութեան վաղուան «զուարճութեան» համար...

Ս. Հախումեան

Պարիզ, 6 յուն. (Ն. տ.)։

(Վերջը միւս անգամ)

լով։ Մի տեղ էլ՝ ծառեր—մարեց յանգ չեն կազմում։ Առաջին տան մէջ էլ բոլոր չորս տողերն էլ նոյն վերջաւորութիւնն ունին։ Եւ վերջապէս կոկոնը և անձրեւը բառերի վրայ ոտքը կաղում է։ Լեզուի տեսակէտից էլ, կարծում եմ, կարելի չէ ասել «ծաղիկներին տեսնել», եթէ միայն ծաղիկն իբրեւ բանական արարած չէ ընդունուած։ Բայց և այնպէս այս բոլոր պակասութիւնները—թող արդարանայ մեր բանաստեղծներից մէկ, որ այդ պակասութիւնները չունի չեն խանգարում, որ այդ ոտանաւորը մեր մէջ մեղմ տրտմութեան, միայնութեան ու զրկանքի զգացում զարթնեցնէ։ Այն էլ գեղեցիկ և մեր բանաստեղծութեան մէջ, որքան գիտենք, երկու նոր հակադիր պատկերներով, ինչպէս են սառն և ծաղիկների, անձրեւի և երաշտած հողի պատկերները։ Անշնորհք ոտանաւոր է, բայց հէնց այդտեղ էլ երեւում է, որ գրողը բնութեան զգացում ունի և կարողանում է իր ենթակայական վիճակը բնութեան պատկերով զգալ և արտայայտել։

Մի բան, որ ցաւելու և ասելու ունենք, այն է, որ պ. Ցակոբեանը բնաւ չէ մտածում արուեստի վրայ։ Մի երկու թշուառական յանգ ու չեշտ կամ նմանները շնչին բաներ են երեւում ըստ ինքեան։ Բայց այդ ամենամեծ սխալն է, որ անում են մեր բանաստեղծները ո տանաւորի չեշտն ու յանգերը, և աւելի ևս չափի տեսակի ընտրութիւնը յաճախ աւելի են զօրացնում իբրեւ նպատակ դրած զգացումը, քան կարելի է կարծել։

Վերցնենք մի ուրիշ ոտանաւոր (եր. 14) «Ուխտ բարեկամութեան»։ Միթէ մի պատկերաւոր մտածութիւն չէ ամբողջապէս, թէ ինչպէս ճակատից քաղած սիրոյ համբոյրն իբրեւ անթառամ վարդ պիտի ապրէ սրտի մէջ, իր բոյրի հետ շնչելով ոգեւորութիւն՝ կեանքի կռուի մէջ տոկալու և անվախ լինելու համար։ Չենք կարծում, թէ մեր բանաստեղծութիւնը հարուստ լինի այդպիսի մաքուր և ազնիւ սիրոյ շատ ոտանաւորներով, աւելի մեծ գեղեցկութեամբ գրուած, որպէսզի այս ոտանաւորը մեր աչքին նշանակութիւն չունենար։ Անշուշտ այդ ոտանաւորն առանձնապէս մի աչքի ընկնող բան չէ. բայց պէտք չէ մոռանալ, որ հայ ազգի բոլոր բանաստեղծութիւնն էլ մի երեւելի բան չէ։

«Նորա շնչով ոգեւորուեմ—
Տոկամ կեանքի պայքարին,
Նորա բոյրով թող տոգորուեմ—
Սիրեմ ցաւը թշուառին»։

Վերցնենք մի երրորդ ոտանաւոր (եր. 23). «Հայ աղջկան»։

«Սրտիս խորքում մի կոկոն վարդ
Վաղուց ունիմ խնամած...
Գիտեմ արդեօք քանի հողմեր
Անցան նորա վրայով
Եւ վշտերի փոթորիկներ
Սպառնացան սև մահով։
Բայց մանկական իմ խնամքով
Նա սրտիս մէջ ամրացած,
Աչքերիս ցօղ արտասուքով
Իր արմատն է ուռճացած։
Դէ, հայ աղջիկ արի շուտով,
Կոկոն վարդիս, եղիր տէր.
Թող որ սիրոյդ ճառագայթով
Բացուին նորա ալ թերթեր»։

Սիրուհին իբրեւ վարդ շատ տարածուած ու հնացած նմանութիւն է, բայց մատաղ սէրն իբրեւ սրտի մէջ խնամած մի վարդենի կամ կոկոն վարդ, դա մի նոր պատկեր է մեր բանաստեղծութեան մէջ, որքան գիտենք։

Պատկերների գեղեցկութիւն և մեղմ վշտի զգացում, միացած սրտից անգիտակցօրէն բխած ջերմեռանդութեան հետ, տալիս է նա մեզ «Աղօթք» ոտանաւորի մէջ (եր. 8)։ Եւ որքան բնական կերպով։ Բանաստեղծը բնութեան երկու մեծ գաղտնիքների առաջ է։ Մի կողմից մարդկային սիրելի կեանքը դէպի խաւար ու մեռելութիւն է դիմում, միւս կողմից բնութիւնը կենդանանում է գիշերային խաւարից։ Եւ այդ ժամանակ ինքն իրեն ծնւում է բանաստեղծի սրտի մէջ ջերմեռանդութիւն յուսոյ և կեանքի ցանկութեան ձգտումից։ Անշուշտ այս բանաստեղծութեան մէջ բնութեան զգացմունքի արտայայտութիւնն աւելի թելադրական (Suggestif) է (եթէ կարելի է այդ բառը գործ ածել), բայց այդ էլ հէնց աւելացնում է գեղեցկութիւնը։

Բնութեան մի քանի զգալի գծերի նկարչական արտայայտութիւն միայն, և մեր երևակայութիւնը լրացնում և զգում է մնացածը։

«Եւ տերևը հեզ ուռենու
Թեթև դողով մրմնջում էր.
Իբրև շրթունք միանձնուհու,
Կարծես, նա էլ աղօթում էր»։

Այդպիսի յաջող ոտանաւորներից են «Ես տանջւում եմ քո քրքիջով, ծիծաղանմեղ և սիրուն» (եր. 34) «Ես երգեցի»... (եր. 48). «Գեղջուկի վախը» (30)։ Գեղեցիկ է և «Գիւղական բալլադան» (եր. 25).

Ոռնում էր բոզար, ողբում էր
Բոզար դունչը ցցելով.
«Եւ այնքան տխուր, սիրտը քրքրող ի-
լէէջներով...

Միթէ մեր աչքի առաջ կենդանի չէ կանգնում այդ գիւղական ոռնացող շան պատկերը, և մենք իսկ փոքր ինչ չենք զգում այն բանից, որ նախապաշարուած Օհան ալւին սարսռացնում է։

Եւ վերջապէս «Քրդի շունը» (եր. 10), այդ շինական տունն ու կեանքը ձմեռը։

«Եւ ձիւնը փայլուն, հալածուած բուքից,
Քուլաներով էր թափւում երկնքից.
Մեր բակի շունն էլ, իր բունը քաշուած,
Ձեան փաթիլները դիտում էր ապշած։
Ես ննջում էի քուրսու մօտ ձգուած,
Փափուկ վերմակը մինչ կուրծքս քաշած...
Բայց ահա յանկարծ մի չարագոյժ ձայն
Լսւում է դրսից—բուի է նման.
Մերթ մեղմ, բարակ, մերթ խիստ փրփրում,
Կարծես այդ ժամին սիրտս քրքրում...
—Ցատիկ, ճչում եմ, այն ո՞վ է ոռնում,
Կարծես նա գաղտուկ ինձ է մօտենում։
—Քնէր, բալա ջան, թագնուիր շուտով,
Քրդի շունն է իրա լակոտով»...

Մի փոքրիկ դրամա, որով յարութիւն են առնում մեր աչքի առաջ այդ անպէտք պառաւն ու իր վախկոտ թոռը և ամբողջ բնութիւնն ու կեանքը, և մենք զգում ենք այդ։

Ասել թէ պ. Ցակոբեանի ոտանաւորները մեծ մասամբ արժէք ունին՝ կարելի չէ։ Թոյլ ոտանաւորներ շատ կան և որովհետև թուով աւելի են առանց այն էլ փոքրիկ գրքոյկի մէջ, ուստի և գրքոյկի ամբողջութիւնը իր տպաւորութիւնը կորցնում է։ Ցաւ է, որ այդ թոյլ ոտանաւորները տպագրուած են։ Բայց և աւելի ցաւում ենք, որ պ. Ցակոբեանը իր ամբողջ գրքոյկն էլ հրատարակել է. նրա ամենից յաջողուած ոտանաւորներն անգամ կարիք ունին դեռ սրբագրուելու։ Մի աւելորդ բառ կամ խօսք, մի պակաս մնացած իմաստ, մի թոյլ յանգ կամ անկանոն չեշտ և կամ շարադասութիւն—կոմպոզիցիայի պակասաւորութիւնը,—դրանք երկրորդական բաներ չեն բանաստեղծութեան համար։ Ինչո՞ւ պէտք է գեղեցիկ պատկերով մտածուած և զգացուած մի ոտանաւոր կորցնէ իր արժէքը մի շնչին տեքնիքական աշխատանք կատարած չլինելու պատճառով։ Եթէ այդ աշխատանքն արած լինէր պ. Ցակոբեանը, եթէ այդ աշխատանքի արժէքը հասկանային մեր միւս բանաստեղծներն էլ, այն ժամանակ շատ ոտանաւորներ կերպարանափոխ կանէին նրանք, նախ քան տպագրութեան յանձնելը։

Լեզուն ևս աղքատ է բաւական։ Բանաստեղծութիւն կարելի չէ առանց արուեստի և լեզուի։ Եթէ այդ աշխատանքն անէ պ. Ցակոբեանը, ի հարկէ գուշակելը դժուար է, բայց կարծում ենք՝ նա կարող է մեր բանաստեղծութեանը տալ հարիւր ոտանաւորներ։ Իսկ նրա տուած ոտանաւորները դեռ ևս մանկական դողդողուն քայլեր են միայն, թէպէտև այդ քայլերից մի քանիսն իրենց արժէքն ունին։

Գրքոյկի մէջ կան թուով եօթն թարգմանութիւն, որոնք մեր ուրիշ լաւ թարգմանութիւններից շատ յետ չեն։

Մ. Աբեղեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԵՐԼԻՆ, 7 յունուարի.—«Berl. Tag.»-ին Լոնդոնից հեռագրում են, թէ երեկ զինուորական մինիստրութիւնն ստացել է հետևեալ հեռագիրը. «Լէդի-Սմիտն ազատուած է»։

ԼՈՆԴՈՆ.—Զինուորական մինիստրութիւնը Սպիրմանսկամպից, յուն. 6-ից, գեն. Բուլլերից հեռագիր է ստացել, որ դաշտային ռմբաձիգների, հուսարների մի-մի գունդ և լէյտ, Լեյտլտոնի զօրաբաժինը Պոտգիեթրսդրիֆտի մօտ անցել են Տուգելա գետից։ Այն ժամանակ, երբ մեր կողմը թշնամին ռմբակոծում էր իր դիրքից, յիշեալ կէտից 5 մղոն վերև 85 եարդ երկարութիւն ունեցող շարժական կամրջով գետից անցաւ գեներալ Ուօրրէնը, որը յոյս ունի իր զօրքերով երեկոյեան արդէն լինել գետից հինգ մղոն հեռու։ Ուօրրէնի աջ թևի առաջ թշնամին շտապով ամրութիւններ է կանգնեցնում։ Զինուորական մինիստրութիւնը հրատարակել է նոյնպէս գեն. Ռոբերտսի հետևեալ հեռագիրը Կապշտադից. «Գատեկրը զեկուցանում է, որ ամեն տեսակ զինակիր 300 զինուոր Բուշմենստեկից առաջ են ուղարկուած դէպի Լոպերբերգ, իսկ դաշտային ռմբաձիգների 74-րդ գունդը և ձիաւոր հրացանաձիգների մի վաշտ—Ստերկստրոմից Բուշմենստեկ։ Ուրիշ ոչ մի փոփոխութիւն չի կատարուած»։

ԼՈՆԴՈՆ.—Ներքին գործերի ներքարտուղար Ուայտ Ռիդլէյ այսօր Բլեկնուլում ճառ խօսեց, որի մէջ այն կրիտիկայի առթիւ, որին ենթարկւում է պատերազմ վարելը, նա, ինչպէս իր, այնպէս և ընկերների կողից, յայտարարեց, թէ ամբողջ մինիստրութիւնը կատարեալ պատասխանատուութիւն է յանձըն առնում։ Ազգի պէս, նա պատերազմի հէնց սկզբից և եթ կատարելապէս համբերատար էր և ամենևին չի կասկածում, որ հէնց որ ժամանակը գայ, մինիստրները կարող կլինեն պատշաճաւոր պաշտպանութիւնը ներկայացնել։ Ոչ մամուլի, ոչ ում և իցէ գործն է քննել պատերազմի դաշտում գործող քաջ գեներալներին։ Նրանք բոլորն էլ վայելում են երկրի և կառավարութեան կատարեալ վստահութիւնը, իսկ միւս կողմից դեռ ևս երբէք պատմութեան մէջ չի եղել այնպիսի մի պատերազմ, երբ զինուորները կռուէին այնպէս լաւ, ինչպէս այժմ։ Պատերազմի ելքն անվիճելի է. ամեն ինչ կախուած է միայն փողից և ժամանակից։

ՍՏԵՐԿՍՏՐՈՄ.—Երեկ բոէրները յօդս ցնդեցրին երեք փոքրիկ կամուրջ Դորդրեխտի երկաթուղու վրայ։

ՍՊԻՐՄԱՆՍՖՐԵՍ.—Լէյտլտոնի զօրաբաժինը հուսարների մի գնդով յունուարի 4-ին անարգել անցաւ Տուգելայից Պոտգիտերսդրիֆի մօտ։ Այդ զօրքերը փոխադարձ հրացանաձգութիւն ունեցան թշնամու հետ և գրաւեցին մի փոքրիկ բլուր հարթավայրի վրայ։ Յուն. 5-ին թշնամու մարդկոցների և ծովային թնդանօթների ու հուսարների միջև խիստ ռմբակոծութիւն էր լինում, որի պատճառով ճեղք գոյացաւ թշնամու պատնէշի մէջ, որը շինուած էր հողով լցուած տոպրակներից. դրանից յետոյ տեսան, թէ ինչպէս թշնամին սկսեց փոքրիկ խմբերով հեռանալ իր ամրութիւններից. այնուհետև ռմբակոծութեան ենթարկուեց անգլիական դիրքի դիմացը գտնուած բլուրը։ Մինչ այդ՝ Ուօրրէնի զօրքն անցաւ Տուգելա գետից եօթ մղոն վերև։

ՌԵՆՍԲՈՒՐԳ.—Նոր Հարաւային Ուէլսի ուլանների գնդի 16 հոգուց բաղկացած մի պահակախումբ երեկ ծուղակն ընկաւ։ Մի տաք կռիւ տեղի ունեցաւ։ Բոէրները յաղթեցին անգլիացիներին. հինգն սպանուած են. երկուսը փախան, մնացածները գերի են բռնուած։

ԼՈՆԴՈՆ. «Times»-ին հեռագրում են. «Լորդ Դենդոնալդը Բուլլերի զօրաբանակից անակնկալ յարձակում գործեց Պոտգիտերսդրիֆտի բարձունքների վրայ. գեն. Լէյտլտոնը յուն. 4-ին և 5-ին անցաւ գետը։ Գեն. Ուօրրէնն անցաւ Տրիչարդսդրիֆտը, ընդդիմութեան չհանդիպելով, թէև բոէրները կանգնած էին գետից չորս մղոն հեռու գտնուած զօրեղ ամրութիւնների ետևը»։

«Daily Tel.»-ը հաղորդում է, որ Ուօրրէնը իր բոլոր զօրքերով, չնայելով բոէրների խիստ ռմբակոծութեանը, յուն. 5 ին անցել է Տուգելան և բանակ է դրել Սպիոնկոպի ճանապարհի վրայ։

ԼՈՆԴՈՆ.—Պոտշտերսդրիֆտի վրայ տիրապետող Մոունտ-Ալիսից հաղորդում են յուն. 3-ից, որ Լէդի Սմիտն ազատելու համար Փրերից և Չիւիլէյից հինգշաբթի օրը զօրք է ուղարկուած։ Փրերից մի քանի մղոն հեռու, Սպրինգֆելդ տանող ճանապարհի վրայ, զօրքերն անցան դաշտով, ուր բոէրները վարժւում էին հրացան պարպելով։ Իբրև նշան ծառայում էին տարածուած շարքերով յառաջ խաղացող զօրքերը, որոնց վրայ բոէրները հրացան էին պարպում հարևան բլուրներից։ Այն բանից յետոյ, երբ խուզարկու պահակները տեղեկութիւն բերին, թէ Սպրինգֆիլդը բռնած չէ թշնամին, այդ կէտը գրաւեցին բրիտանական զօրքերը։ Թշնամին, որ յուն. 2-ին կանգնած էր Պոտշտերսդրիֆտի մօտ, անշուշտ յանկարծակիի եկաւ։ Գաղթային զօրքերի մի մասն անցաւ գետը թշնամու կրակի տակ։ Թշնամին շտապով հեռացաւ բանակատեղից, որը գտնւում էր Ատլասի լեռան դիմացը ձգուող բարձունքների վրայ։ Գեն. Բուլլերը իր գլխաւոր բանակը տեղափոխեց բոէր Մարտինս Պրետորիուսին պատկանող գիւղի մօտ։ Պրետորիուսը փախաւ։ Ուրբաթ օրը մի պայթում լսուեց։ Այժմ բացայայտուած է, որ թշնամին քանդել է Պոտշտերսդրիֆտից եօթ մղոն վերև կառուցուող կամուրջը։

Բուլլերը մի եռանդուն կոչ է հրատարակել, որն սկսւում է այսպէս. «Մենք գնում ենք ազատելու Լէդի-Սմիտում գտնուող մեր ընկերներին։ Յետ դառնալ անկարելի է. ընդամէն նախազգուշացնում եմ, որ սպիտակ դրօշակը չպէտք է անձնատուր լինելու հաւաստի նշան համարել»։ Զօրքերի տրամադրութիւնը վստահելի է և ոգևորուած. առողջապական դրութիւնը գերազանց է։

ԼՈՆԴՈՆ.—«Daily Tel.»-ին Սպիրման գիւղից, յուն. 6-ից հեռագրում են, որ այդ առաւօտ նորոգուած է բոէրների գծերի ռմբակոծումը հաուբիցներով։

ՄՈԴԵՐ ՌԻՒԵՐ.—Մետուէնի հրամանատարութեան տակ գտնուած խուզարկու զօրքը բացայայտեց, որ վերջերս գտնուած բանակը վերացրած է թնդանօթների և հրացանների կրակով։ Թշնամին քշուած է թփերի ետևից և անաջող պատասխանում էր անգլիացիների գնդակներին։

ԿԱՊՉՏԱԴ.—Հաւաստի աղբիւրից հաղորդում են, որ բոէրները քանդել են Ձտայնբուրգի և Կրինգստէի միջև գտնուած երկաթուղու կամուրջներն ու ջրանցքները։ Քանդուած են նմանապէս Ստորմբերգից տանող երկաթուղու մի մասն ու մի քանի ջրանցքներ։

Այստեղի ռազմական դատարանը մի շաբաթ յետաձգեց Սունէյժդու մօտ բռնուած 41 ապստամբների գործի քննութիւնը։

ԼՈՆԴՈՆ.—Պաշտօնապէս։ Դենդոնալդի հեծեալ զօրաբաժինները չորեքշաբթի ցերեկով հանդիպեցին բոէրների Ատկոր-Հոլմսից դէպի արևմուտք։ Երբ, երեկոյեան ժամը 7-ին, վրայ հասաւ Ուօրրէնի ուղարկած օժանդակիչ դրագուն զօրքը, Դենդոնալդը կռուով գրաւեց մի քանի բլուրներ և այժմ բռնած ունի այդ դիրքը։ Բոէրներից սպանուեց և վիրաւորուեց 21 հոգի, դրանց թւում մի ֆելդկորնետ, և 15 հոգի էլ գերի բռնուեցին։ Անգլիացիներից վիրաւորուած է մի սպայ, սպանուած և վիրաւորուած են երեք զինուոր։

ԼՈՆԴՈՆ.—Պաշտօնապէս հաղորդւում է, որ առաջիկայ շաբաթ Հարաւային Աֆրիկա է ուղարկուելու այնտեղի ռմբաձիգներին օգնելու համար 72 թնդանօթ, 3710 հոգի և 2,210 ձի։

Այն տարածուած լուրը, թէ կատարեալ յաղթութիւնից յետոյ Լէդի-Սմիտն ազատուած է, մտել է նաև զինուորական մինիստրութիւնը։ Մինիստրութեան մէջ հաստատ յոյսեր ունին, բայց կարծում են, որ այդ լուրը վաղաժամ է. տրամադիր են ենթադրելու, որ Լէդի-Սմիտն ազատուելուց առաջ, հաւանականաբար, մեծ ճակատամարտ պիտի լինի եղած։

ՌԵՆՍԲՈՒՐԳ, 8 յունուարի.—Ստացուած տեղեկութիւնների համաձայն, անգլիացիների կողմից բոէրների բանակը դեկտ. 31-ին ռմբակոծուելիս սպանուած է 16 բոէր և 63 ձի։ Թշնամին դեռ ևս մի փոքրիկ դիրք ունի բռնած Սլինգերսֆոնտեյնից դէպի հիւսիս։

ՎԵՆՆԱ.—«Neue Freie Presse»-ին Կրակովից հաղորդում են, որ այնտեղի մանրակենսաբանական ինստիտուտի բժիշկ-ասիստենտ Կոստանեցկին մեռել է ժանտախտի նշաններով։ Վիեննայից և Լվովից Կրակով մեկնեցին բժիշկներ մանրակենսաբանական հետազօտութիւններ կատարելու համար։ Վիեննա ուղարկուած թոքի վերլուծութիւնը բացասական հետևանքներ ունեցաւ։

ԿՐԱԿՈՎ. — Կոստանեցկու մարմնի կլինիկական նշաններն ու բացումը ժանտախտի վերաբերմամբ բացասական հետևանք ունեցան։ Մարմնի հետազօտութիւնը ցոյց տուեց ստրեպտոկոկկերի սուր վարակման պատկեր։

ԼՈՆԴՈՆ. — Սպարմանոֆիրմից «Times»-ին հաղորդում են, որ բոէրների դիրքը ձգւում է դէպի արևմուտք վեց մղոն, Պոտգիտերսդրիֆտի դիմացը գտնուած լեռնաշղթայի երկարութեամբ։ Այդ դիրքը բաւական ցածր է բրիտանական դիրքից, որը գտնւում է Ալիս լեռան վրայ, որտեղ դրուած են ծովային թնդանօթներ։ Բոէրներն իրենց ձեռքում ունին Սպիոնկոպ դիրքը, մինչև գետը։ Բոէրների փոսերը ձգուած են մի քանի մղոն խորը։

ՊՐԵՏՈՐԻԱ.—Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, անգլիացիները յուն. 5-ի առաւօտ սկսեցին անցնել Տուգելա գետից երկու զանազան տեղից։ Ճակատամարտ է լինելու։ Ասում են, որ գնդապետ Պլումերը Տուլուց երկաթուղու զրահաւոր երեք կնացքով մօտեցել է Գաւորոնեսին։ Անշուշտ նա ուզում է ազատել Մեֆկինգը։

ԼՈՆԴՈՆ.— Լրագրները հաղորդում են, որ հրաման է տրուած անյապաղ կեդրոնացնելու ութերորդ զօրաբանակն Օլդերշոտում։

ԿԱԼԿԱԹԱ.—Ընդհանուր-նահանգապետի խորհրդի մէջ երկրագործութեան եկամուտների դեպարտամենտի քարտուղար Իբբետսոնը խօսում էր Հնդկաստանում տիրող սովի մասին։ Մարտի վերջը կառավարութեան ծախքերը, որոնք աւելացել էին սովի պատճառով, հասնում էին 30—40 միլիոն ռուփիայի։ Բրիտանական հողերում 22 միլիոն մարդ տանջւում էին այդ դրութիւնից, իսկ ընիկների հողերում—27 միլիոն մարդ։ Անհրաժեշտ է միջոցներ գտնել այս անօրինակ վիճակը թեթևացնելու համար։ Փոխարքան իր կողմից ասաց, թէ սովի ենթարկուած տեղերն այնքան մեծացել են, որ ամենևին սպասել չէր կարելի։ Երկրի մէջ անասունների համար ջուր չկայ և կենսական մթերքների պակասութիւն է զգացւում սարսափելի կերպով։ Այժմ մօտ 3½ միլիոն

հօգի նպաստներ են ստանում։ 1897 թ. Անգլիայում հաւաքուած էին հարիւր հազարներ սովեալների համար, և ամբողջ աշխարհը մասնակցում էր Հնդկաստանի համար եղած հոգացողութեանը։ Այժմ Հնդկաստանը պէտք է կռուի մենակ, որովհետև Անգլիայի և անգլիացիների բոլոր մտքերը կեդրոնացած են Հարաւային Աֆրիկայում։ Անգլիան իւր հոգացողութիւնը պիտի իրագործի համբերութեամբ, քաջութեամբ և այն գիտակցութեամբ, որ կատարում է իւր պարտքը, սովից ազատելով միլիոնաւոր մարդիկ։

ՈՒԱՇԻՆԳՏՕՆ.—Առաջարկուած բոլոր որոշումներից սենատն ընդունեց այն առաջարկը, որի մէջ Մակ-Կոնլէյից խնդրում են հաղորդել, թէ ով և ինչ ձգտել է արդեօք ճանաչել իբրև Տրանսվաալի ներկայացուցիչ և եթէ ձգտել է, նրա ձգտմանը դոհացում է տրուած արդեօք, իսկ եթէ մերժուած է, ինչ պատճառներով։

ԼՈՆԴՈՆ.— Վիլենսկամպից, վերին Տուգելայի վրայ, Լորենցո-Մարկեզի վրայով, յուն. 4 ից հաղորդում են, որ Բուլլերի անցած գիշեր ունեցած երկրորդ յառաջխաղացումը Կոլենզոյի կողմը կատարած մի խուզարկութիւն էր դրահաւոր գնացքով, որի վրայ գտնւում էր բազմաթիւ զօրք և մի թնդանօթ։ Տեղի ունեցաւ մի սաստիկ ռմբակոծութիւն, որից յետոյ անգլիացիները վերադարձան բանակ։ Մի բոէր վիրաւորուեց։ Բոէրները կրակին չէին պատասխանում։ Այդ շարժումը մի խաղ էր ծածկելու համար դէպի պետի հոսանքն ի վեր կատարուող մեծ շարժումները։ Տուգելայի այս կողմն ապրող քաֆիրներին առաջուց յայտնուած է, որ նրանք հեռանան իրենց գիւղերից։ Ճակատամարտը կըսկսուի ամենամօտիկ ժամանակում։

ԼՈՆԴՈՆ.—Լէդի Սմիթից, յուն. 5 ից, հաղորդում են, որ այնտեղ «անդորրութիւն է տիրում. դրութիւնն անփոփոխ է։ Ամենաանչան ռմբակոծութիւն։ Երեկ լսում էին Լէդի Սմիթն ազատելու համար եկող զօրքերի թնդանօթների ուրախալի արձագանքները»։

ԼՈՆԴՈՆ.—Վիլլենսկամպից, յուն. 5 ից, հեռագրում են. «Անցած գիշեր անդորրութիւնը չէր խանգարուած, միայն յառաջապահ զօրքերը մերթ ընդ մերթ փոխադարձ հրացանաձգութիւն ունէին։ Այսօր, լուսադէմին, անգլիացիները դեռ ևս գտնւում էին հին դիրքի վրայ և դեռից չէին անցկացրել ոչ մի թնդանօթ, բայց հեւարտակող յետոյ զապաթից, առաւօտեան ժամը $1^{1}/_{2}$-ին, պաշարողական թնդանօթներն սկսեցին ռմբակոծել բոէրների դիրքերը։ Ժամը $3^{1}/_{2}$-ին ռմբակոծութիւնն առանձնապէս զօրեղ էր»։

ՊՐԵՏՕՐԻԱ.—Կոլսբերգում, բոէրների մօտ գտնուած մի թղթակից յուն. 4-ից հեռագրում է, որ շաբաթ օրն անգլիացիները փորձել էին կտրել Ախտենփանգի հետ ունեցած հաղորդակցութիւնը, բայց Պրետորիայի և Իօհաննէսբուրգի ոստիկանական զօրքերը յետ մղեցին նրանց կորուստներով։ Յուն. 4 ին անգլիացիները փորձեցին առնել Դելարէյի դիրքը, բայց ստիպուած էին վերադառնալ բանակ, բոէրների ռումբերից հալածական եղած։ Կոլսբերգի շուրջը ամեն օր մենաւոր ռմբակոծութիւն է, լինում, բայց աննշան աջողութեամբ։

ԼՈՆԴՈՆ – Սպարմանսկամպ, 7 յունուարի։ Այսօր ծովային թնդանօթներն ընդմիջումներով ռմբակոծում էին թշնամու ամրութիւնները։ Մաունդ-Ալիսի գլխացը գտնուած բարձունքների վրայ քիչ բոէրներ են նկատւում։

«Standard»-ին Սպարմանսֆերմից հաղորդում են, յուն. 6-ից, թէ Կոլենզոյի [illegible]

Տուգելայի հարաւային ափը և կրակի մատնեցին աւանի բոլոր տները։ Որովհետև անգլիական զօրքերն առաջ քաշուեցին Չիւիլէյից, այդ պատճառով բոէրները նահանջ տուին դէպի Կոլենզոյի հետ մի գծի վրայ գտնուած բլրի ետևը։ Բրիտանական հետևակները, հրացանները պարպելով, յարձակման դիմեցին։ Երկրորդ ճակատամարտում մասնակցում էին պահեստի գնդերը, մինչդեռ բրիտանական հեծելազօրը խուզարկութիւն էր կատարում աջ թևի վրայ մինչև գետը։ Կոլենզոյի մօտ կանգնած բոէրների ուժերը պէտք է որ նշանաւոր չափով թուլացած լինէին, որովհետև բազմաթիւ զօրքեր են ուղարկուած դէպի արևմուտք Բուլլերի յառաջխաղացմանն արգելք լինելու համար։ Նրանք շտապով հեռացան Կոլենզոյի դիմացը, գետի վրայ գտնուած ամրութիւններից։ Ամրութիւնները քարուքանդ եղան ռումբերից։ Երեկոյեան հրացանի գնդակի հասած տարածութեան վրայ Կոլենզոյի մօտ թշնամուց ոչ ոք չէր մնացել։ Բրիտանական ուժերը նահանջ տուին դէպի Չիւիլէյ։

«Times»-ին Պիտերմարիցբուրգից, յուն. 6 ից հաղորդում են, որ Բուլլերի և Ուօրրենի միացեալ ուժերին պատկանում են շատ ռմբաձիգներ և հեծեալներ, նմանապէս և բաւական թուով հետևակներ։ Ուօրրենի, Դանդոնալդի, Գիլեարդի, Կլերու և Գարտի զօրքերը Լէդի Սմիթի ամբողջ հովտի վրայ տիրապետող գերազանց դիրքեր են գրաւել։ Զօրքերի մի մասը մնացել է Չիւիլէյում, որպէսզի բոէրներին թոյլ չտայ անցնելու Տուգելայից Կոլենզոյի մօտ։

ԼՈՆԴՈՆ.—Կահիրէից «Daily Tel.»-ին յուն. 7-ից հաղորդում են, թէ երեկոյեան այնտեղ լուր է ստացուած, որ Օսման Դիգման գերի է բռնուած։ Վաղը նրան կըտանեն Սուակիմ։

ԲԱՆԱԿ ՍՊԱՐՄԱՆԻ ՄՕՏ.- Այս առաւօտ լսւում էին ձախ թևի թնդանօթների ձայներ։ Ուօրրէնն, ըստ երևոյթին, սկսել է ռմբակոծել թշնամու դիրքերը. Տալենիսամ լեռան վրայ լսւում էր կարճատև հրացանաձգութիւն։ Հինգշաբթի օրը գերի բռնուածների մէջ է Պրետորիայի թոռներից մէկը։

ԼՈՆԴՈՆ.—Ռաբերտսը հեռագրել է զին. մինիստրութեանը, որ Ֆրենչը իւր կծերն առաջ է տարել արևելեան ուղղութեամբ, այդպիսով սպառնալով թշնամու նահանջ տալու ճանապարհին։

ՌԵՆՍԲՈՒՐԳ.—Երկու հասարակայնութիւնների դանազան անձերի հաղորդածների համաձայն, մինչև այժմ բոէրներից սպանուել և վիրաւորուել են ընդամենը 6,425 հոգի։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռախօս № 130

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2---4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր՝ ժամը 8---10 առաւօտեան---վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Զուները լաւ են։ Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 մ. 50 կ. մինչև 8 ր. մի օրու գիշերուայ ըհամար. Ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատուելը 10 ր. մինչև 50 ր.։ Անգո համաձայնութիւն ըստ համաձայնութ. [illegible]

նկերների պարէկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տնօրէն
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ

Հինգ տեղ ունեցող կարեթներ Առաջին - առ. 7 ժ. գիշերում է Մլէթում, Թիֆլիս համնում է հետևեալ օր եր. 6 ժ. 30 ր., երկրորդը - առ. 9 ժ. գիշերում է Գուդաուրում, համնում Թիֆլիս հետևեալ օրը եր. 7 ժ. 55 ր.

Վեց տեղ ունեցող օմնիբուսներ առանց գիշերելու. առաջին առ. 11 ժ Թիֆլիս համնում է հետևեալ օրը ցեր 1 ժ. 20 ր., երկրորդը -եր. 8 ժ., համնում է Թիֆլիս հետևեալ օրը եր. 10 ժ 15 ր.։

Լինէյկա, առանց գիշերելու,—ցեր. և ժ., համնում է Թիֆլիս հետևեալ օրը 3 ր6 ժ. 10 ր.։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է ցեր. 4 ժ. 15 ր., համնում Թիֆլիս առ. 8 ժ. 40 ր., Թիֆլիսից Բաթում մեկնում է առ. 9 ժ. 10 ր., համնում է Բաթում եր. 8 ժ. 32 ր.։

Մարդատար № 3 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., Թիֆլիս համնում է եր. 6 ժ. 38 ր., Թիֆլիսից Բա[illegible] մեկնում է եր. 7 ժ. 37 ր., հա[illegible] է Բաթում առ. 8 ժ. 12 ր.։

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է առ. 9 ժ. 15 ր., Թիֆլիս համնում է եր. 8 ժ. 53 ր., Թիֆլիսից Բագու մեկնում է եր. 9 ժ. 23 ր., Բագու համնում է ցեր. 11 ժ. 40 ր.։

Պոստային № 4 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է եր. 9 ժ. 05 ր. Թիֆլիս համնում է առ. 9 ժ. 45 ր. Թիֆլիսից Բագու մեկնում է առ. 11 ժ 25 ր., Բագու համնում է առ. 6 ժ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Կիրակի, յունուարի 9 ին 1900 թ. պ. պ. անդամների կանդիտատների և նրանց ընտանիքների համար տեղի կունենայ հայ դրամատիկական ընկերութեան դերասանների մասնակցութեամբ

I

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ»

կոմ. 3 գործ., հեղ.

Չեխովի, թարգ. Տէր-Յովհաննիսեանի։

II

Ջ Ա Ի Ե Ճ Տ

Սկիզբն է երեկոյեան ժամն $8^{1}/_{2}$-ին։ Տոմսակները՝ 20, 30, 50, 75 կոպէկանոց և 1 րուբլանոց՝ վաճառւում են ժողովարանի բարապանի մօտ։ Ներկայացումը վերջանալուց յետոյ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

(209) 3—1

Լոյս տեսան

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1900 Թ.

ԾՈՑԻ ԵՒ ՊԱՏԻ

(Շիրակ)

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարուած է հայ մի քանի գործիչների պատկերներով, ունի նոր յաւելուած, ընդարձակ բժշկարան, հարուստ երազահան և նոր զուարճալի վիճակարան։

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ, նոր ծիծաղաշարժ առակներ՝ մոլլա Նասր-էդդինից, Դալի-Քէչիչից, Պըլըպուղուց, այլ և ժողովրդական առածներ, գիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, ժողովրդական երգեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ. բժշկական, տնտեսական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ։

Գները՝ ծոցինը—20 կ., պատինը—50 կ.։ Փոստով գնողներին լինում է զեղչում։ Դիմել Александрополь Карапету Апиніанъ. կամ Alexandropole Karapet Apinian (Caucase)

(150) 20 16

ԿԱՊՍՈՒԼՆԵՐ

ԴՐՈՒՄՕ ԵՒ ԸՆԿ. ՄԱՏԻԿՈՅԻՑ

(CAPSULES AU MATICO)

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԸ ՊԱՐԻԶՈՒՄ



Թոյլատրուած է Ռուսիայում։ Այս կապսուլները պատրաստուած են Մատիկոյի էսսէնցիայից և Կոպայ-բալզամից։ Այս կապսուլները գտնւում են սոսնձի թաղանդի մէջ, ուստի և չունին ոչ վատ համ, ոչ հոտ։ Պահեստը Ռուսիայի գլխաւոր դեղատներում։

(M.)184835 21—1

եր. գործ. մին. բժշկ. խորհ. թոյլատրել է

ԿԱՑԵԽՕ-ԿՐԵՕԼԻՆԻ ՕՃԱՌԸ

Քիմիայի մագիստրոս Ե.Ի.ԳՕԴԶԵՒԻՉԻ

ԲԺՇԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ կաշու հիւանդութիւնները և

ՏՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԾ. ՀԱՄԱՐ

Օճառների մանրամասն նկարագիրը, որի մէջ ցոյց են տրուած գները և գործածութեան եղանակը, պահանջողին ուղարկւում է ՉՐԻԱԲԱՐ լաբորատորիան--С.-Петербургъ, Б. Морская 13. Պահեստները գտնւում են լաբորատորիայի կից և Տեր. Ապր. Առևտր. Ռուս. Ընկ. մէջ Պետերբուրգում և Խարկովում։ Վաճառւում է բոլոր դեղատներում և դեղերի խանութներում։

M. 52—14

ԱՄԵՆԱԼԱՒՆ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(M.)№181554 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է հասարակութեան, որ Թիֆլիսի նահանգապետի պ. պաշտօնակատարի թոյլտուութեամբ քաղաքային կասսայում նուիրաբերութիւններ են ընդունւում յօգուտ Թիֆլիսի աղքատ բնակիչների՝ նրանց փայտ, ածուխ, ձրի ճաշ և դրամական օգնութիւն հայթայթելու համար։ Նուիրաբերութիւնները կընդունուին ամեն լի օր առաւօտեան 9 ժամից մինչև 2 ժամը։ Նուիրաբերութիւնները կարելի է յանձնել նաև յանձնաժողովի անդամներին, քաղաքային խորհրդի հետևեալ իրաւասուներին Գ. Մ. Ցախըրեանին, Մ. Ն. Վասիլովզորովին, Ի. Ա. Սուլխանեանցին, Ա. Գ. Երէցփոխեանին, Ա. Ս. Բաղդասարովին և Ի. Ս. Բուդաղեանցին ինչպէս նաև յանձնաժողովի նախագահ, քաղաքային վարչութեան անդամ իշխան Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին։

(204) 3—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ—ՊԱՆՍԻՕՆ

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Յունուարի 2-ից ընդունում է երթևեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է գիմնազիաների, կադետների կորպուսի, գիմլէմէրների, ռէալական, առևտրական և այլ ուսումնարանների համար։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն ստացած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ՝ Կիֆեր, Լիվիցկի, Կոլէնկօ, Պետանցկի և այլն։ Առանդերի առարկաներն են—կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն (ռուսաց և ընդհանուր) պատմութիւն, բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, պար, երաժշտութիւն։ Հասցէն. ТИФЛИСЪ, Гановская ул., №11. 3-րդ գիմնազիայի մօտ։

(203) 10—3

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ де РОЗЬЕ

20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ

ЖЖЕНЫЙ КОФЕ

ПРОДАЖА ВЕЗДѢ

С. СІУ и К°

(М.) № 35811 26 24

ТАМАРЪ ИНДІЕНЪ

КАРПИНСКАГО.

Слабительные конфекты.

Не заключаютъ въ своемъ составѣ ничего раздражительнаго.

Принимаются не измѣняя ни въ чемъ ежедневныхъ привычекъ.

ПОЛУЧАТЬ МОЖНО ВО ВСѢХЪ АПТЕКАРСКИХЪ МАГАЗИНАХЪ.

ГЛАВНЫЙ СКЛАДЪ:

Варшава. Аптека Фр. В. Карпинскаго. Электоральная ул. № 39, соб. домъ.

Цѣна коробки въ 12 штукъ 75 коп.

Адресъ для телеграммъ: ВАРШАВА. КАРПИНСКІЙ.

171 20—16

Дозв. цензурою. Тифлисъ, Дек. 30-го дня, 1899 г. Տպարան Ս. Մելիք-Շահնազարեանի А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ